ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Դիմակայուն, բաց և հաշվետու ժողովրդավարություններ Արևելյան գործընկերության համար (Road4EaP)

Իրականացման ժամանակահատված: 09.08.2024 - 09.08.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 500 000

Ընդհանուր բյուջե: € 1 666 666

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Open Government Partnership Europe, Open Government Partnership Secretariat

Նախագծի կայքէջ: opengovpartnership.org/eu-for-integrity-programme/

Նախագծի նկարագրություն:

«Դիմակայուն, բաց և հաշվետու ժողովրդավարություններ Արևելյան գործընկերության համար (Road4EaP)»
Գործողությունը ներկայացնում է ժողովրդավարության ամրապնդման և քաղաքացիների կյանքի բարելավման ճանապարհային քարտեզը Արևելյան գործընկերության երկրներում՝ աջակցելով բաց, ներառական և հաշվետու կառավարման համակարգերի ձևավորմանը, որոնք ունակ են դիմակայելու կոռուպցիային: Գործողության նպատակն է նվազեցնել կոռուպցիան և խթանել ավելի թափանցիկ, քաղաքացուն կենտրոնում դնող կառավարման մոդելներ:
Այս նպատակին հասնելու համար նախագիծը խթանում է հակակոռուպցիոն և բաց կառավարման բարեփոխումները՝ ներգրավելով պետական կառավարման տարբեր մակարդակների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրագրողների և մասնավոր հատվածի դերակատարների Արևելյան գործընկերության երկրներում: Հիմնական գործունեությունները ներառում են Բաց կառավարման գործընկերության (OGP) գործողությունների ծրագրերի մշակումն ու իրականացումը, քաղաքացիական հասարակության կարողությունների ամրապնդման նպատակով ենթադրամաշնորհների տրամադրումը, շահագրգիռ կողմերի մասնակցության խթանումը OGP միջոցառումներին, տարածաշրջանային փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպումը, ինչպես նաև առաջնորդության և հմտությունների զարգացման դասընթացների, ապացույցների վրա հիմնված առաջարկությունների և բաց կառավարման մրցանակների իրականացումը, որոնք ճանաչում և տարածում են հաջող բարեփոխումները:

Ակնկալվող արդյունքներ:

1. Բաց կառավարման և հակակոռուպցիոն բարեփոխումները համատեղ ձևավորվել են ներառական գործընթացների միջոցով:
2. Կառավարության և քաղաքացիական հասարակության դերակատարների ավելի լայն շրջանակ ներգրավված է և համագործակցում է բաց կառավարման և հակակոռուպցիոն բարեփոխումների շուրջ:
3. Միջազգային գործընկերների և բազմակողմ հաստատությունների հետ ձևավորվել և խորացվել են կայուն գործընկերություններ և համագործակցություն՝ բաց կառավարման և հակակոռուպցիոն նախաձեռնություններին աջակցելու նպատակով:
4. Բաց կառավարման և հակակոռուպցիոն բարեփոխումների ոլորտում գործող դերակատարների կարողությունները ամրապնդվել են, իսկ նրանց փորձն ու ձեռքբերումները արժևորվել և հանրայնացվել են:
5. Բաց կառավարման և հակակոռուպցիոն մոտեցումները համակարգային կերպով ամրապնդվել են: